



Ի՞նչ է Dial-A-Ride-ը

Dial-A-Ride-ը մայթեզրից մայթեզր փոխադրության ծառայություն է, որը մատուցվում է Գլենդեյլի, Լա Կանյադա Ֆլինտրիջի, Լա Կրեսենդայի, Մոնտրոզի և Վերդուգո Սիտիի 65 տարեկան կամ ավելի տարեց բնակիչներին: Ծառայությունը մատուցվում է նաև ցանկացած տարիքի հաշմանդամ բնակիչի:

Dial-A-Ride-ի ծառայությունից օգտվելու համար բնակիչները պարտավոր են գրանցվել: Գրանցման պահին պահանջվում են տարիքի և բնակության, ինչպես նաև բժշկի կողմից վկայված հաշմանդամության ապացույցներ:

Dial-A-Ride-ով ուղևորություն ծրագրելիս, խնդրում ենք հիշել, որ Dial-A-Ride-ը բաժնեկցված հանրային փոխադրություն է: Հնարավոր է, որ ճանապարհին ուրիշ ուղևորներ վերցվեն և տեղ հասցվեն: Ուղևորությունները կատարվում են անվաթոռներին պատշաճ փոքրիկ երթուղայիններով կամ միջին չափսի ավտոբուսներով, որոնք կարող են բավել մի քանի ուղևորի:

Որտե՞ղ է այն ուղևորվում

Բնակիչները կարող են Dial-A-Ride-ով ուղևորվել Գլենդեյլում, Լա Կանյադա Ֆլինտրիջում, Լա Կրեսենդայում, Մոնտրոզում և Վերդուգո Սիտիում ցանկացած վայր: Լա Կանյադա Ֆլինտրիջի բնակիչները կարող են նաև ուղևորվել Պասադինայի մի շարք վայրեր՝ Լեյկ պոդոտայից արևմուտք և Կալիֆոռնիա ծառուղուց հյուսիս: Dial-A-Ride-ը այս ծառայության տարածքից դուրս՝ Բրրբենկ կամ Լոս Անջելես չի գնում:

Որո՞նք են ծառայության ժամերը

կ.ա. 8:00-ից կ.հ. 6:00-ը, երկուշաբթիից ուրբաթ
կ.ա. 9:00-ից կ.հ. 4:00-ը շաբաթ օրերին
կ.ա. 9:00-ից կ.հ. 2:00-ը կիրակի օրերին:

Հաճախորդի ծառայության պատվիրման գիծը՝ (818) 247-0691, մատչելի է վերևը նշված ծառայության ժամերից 30 րոպե առաջ և մի ժամ հետո:

Ինչքա՞ն է ուղեվարձը

Միակողմանի ուղևորության ուղեվարձը կազմում է \$1.50: Օգնության կարիք ունեցող ուղևորների դեպքում անձնական խնամքի ուղեկիցը (Personal Care Assistant, PCA) կարող է Dial-A-Ride-ի համար գրանցված անձին ուղեկցել անվճար: Գլենդեյլում սննդարար ճաշավայր ուղևորվող անձինք ուղեվարձ չեն վճարի: Ուղեվարձի համար ճշգրիտ մանրադրամ է հարկավոր Dial-A-Ride մեքենան նստելիս: Վարորդները չեն կարող մանրադրամ վերադարձնել կամ նվեր տրված փող ընդունել:

Ինչպե՞ս գրանցվել

Բնակիչները Dial-A-Ride-ի համար կարող են գրանցվել դիմումնագիր լրացնելով: Առցանց դիմումնագիրն առկա է www.GlendaleDialARide.com կայքում: Դիմումնագիրը տրամադրելի է նաև զանգահարելով **818-548-3960**, [ընտրանք 2](#):

Հիմա, որ գրանցվել եմ, ինչպե՞ս կարող եմ ուղևորվել

Պատվիրելը

1. Գրանցված պետք է լինեք: Գրանցվեք լրացնելով Dial-A-Ride-ի դիմումնագիրը: Առցանց դիմումնագիրը առկա է www.GlendaleDialARide.com կայքում:
2. Փոստով ձեր Dial-A-Ride-ի գրանցման հաստատումն ստանալուց հետո, զանգահարեք պատվերների գրասենյակ՝ **(818) 247-0691**: Ժամադրությունները կարող եք ապահովել ուղևորությունից նվազագույնը 24 ժամ և առավելագույնը երկու շաբաթ առաջ:
3. Պատրաստ գտնվեք պատվերներն ընդունող գործակալին տալու ձեր անունը և տան հեռախոսահամարը: Խնդրում ենք նշել, եթե անվաթոռ եք օգտագործելու կամ եթե ուղևորվում եք անձնական խնամքի ուղեկցի ընկերակցությամբ:
4. Պատվերներն ընդունող գործակալին ներկայացրեք հասցեն, որտեղ գնում եք, և ձեր ցանկացած ուղևորության ժամն ու ամսաթիվը: Խնդրում ենք օգնել, որ բարելավենք մեր արդյունավետությունը՝ մեզ իմացնելով ձեր ժամանակացույցի ճկուն լինել կամ չլինելը:
5. Պարտավոր եք ձեր վերադարձի ուղևորության պատվերը ևս ներկայացնել առաջուց: Խնդրում ենք պատվերներն ընդունող գործակալին իմացնել, թե երբ եք ցանկանում, որ մեքենան հասնի ձեր վերադարձի ուղևորության համար:
6. Պատվերներն ընդունող գործակալը կհաստատի յուրաքանչյուր ժամադրության օրը, ամսաթիվն ու ժամը:

Ուղևորություն կատարելը

1. Խնդրում ենք պատրաստ լինել Dial-A-Ride մեքենան բարձրանալու հենց որ այն հասնի մայթերին:
2. Dial-A-Ride մեքենան թերևս հասնի ձեզ համար նշանակված ժամից **10 րոպե առաջ**: Dial-A-Ride մեքենան կարող է նաև հասնել ձեզ համար նշանակված ժամից **20 րոպե հետո**: Օգնեք, որ ճշդապահ լինենք մեքենան նստելու պատրաստ լինելով՝ հենց որ այն հասնի:
3. Եթե Dial-A-Ride-ը հասնելիս մայթերում չգտնվեք, վարորդը իր հասնելուց հետո կսպասի առավելագույնը հինգ րոպե: Խնդրում ենք նկատի ունենալ, որ վարորդները չեն կարող շենքերից կամ բնակելի համալիրներից ներս մտնել ուղևորներին որոնելու համար:
4. Խնդրում ենք անպայման ջնջել ձեր պատվերը՝ եթե ձեզ համար նշանակված օրը չեք կարող ուղևորվել: Պատվիրման գրասենյակ զանգահարեք (818) 247-0691 համարով, եթե պարտավոր եք ջնջել կամ վերադասավորել ձեր ուղևորությունը:

Վստահ չեմ, արդյո՞ք ծառայությունը հարմար է ինձ համար: Ինչպե՞ս կարող եմ պարզել այն:

Dial-A-Ride-ի անձնակազմը հաճույքով անձնականացված այց կտա ձեզ՝ ներկայացնելու ծառայությունն ու ընծայելու սովորական Dial-A-Ride մեքենան տեսնելու պատեհություն: Անձնակազմը ձեզ կօգնի մեքենա նստել և ուղեվարձը վճարել: Dial-A-Ride-ի մարդամտ անձնակազմը կկարողանա պատասխանել ձեր բոլոր հարցերին և ձեր ունեցած բոլոր կարիքներին: Զանգահարեք պատվիրման գրասենյակ (818) 247-0691 համարով՝ լուսաբանական այցի շուրջ պայմանավորվելու համար:

Եթե հարցեր ունեք, խնդրում ենք է-նամակ ուղարկել DialARide@ci.glendale.ca.us

Հասցեով կամ զանգահարել (818) 548-3960, ընտրանք 2:



City of Glendale Public Works Department
East Broadway, Room 209
Glendale, CA 91206